



ԳՈՐԾԱԿԱԼԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրական գործակալի գործառույթներ

Ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակներում ապահովագրական գործակալի կողմից իրականացվող գործառույթներն են՝

- Ապահովագրության պայմանագրերի (Վկայագրերի) կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ ապահովագրական խորհրդատվության իրականացում:
- Ապահովադիրների և Ապահովագրողի միջև ապահովագրության պայմանագրերի (Վկայագրերի) կնքման կազմակերպում:
- Ապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ ապահովագրավճարների հավաքագրման իրականացում կամ վերահսկում:

Ապահովագրության դաս

Ապահովագրական գործակալի պայմանագրով Գործակալը լիազորվում է ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնել հետևյալ ապահովագրության դասերով.

1. Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ՝ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ).
2. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային).
3. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն.
4. Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն.
5. Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն.
6. Առողջության ապահովագրություն.
7. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն.
8. Աջակցության ապահովագրություն.
9. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն.
10. Ֆինանսական վնասների ապահովագրություն.

Ապահովագրավճարի սահմանաչափեր

Գործակալի կողմից կնքված ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի) գծով հավաքագրված և վերջինիս մոտ պահվող ապահովագրավճարների թույլատրելի առավելագույն չափը սահմանվում է 500 հազար – 20 միլիոն ՀՀ դրամ: